ՈՐՈՇՈՒՄ

Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

02.12.2025թ. **ք. Երևան**

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա և Շենգավիթ վարչական շրջանների բաժնի հարկադիր կատարող, արդարադատության ավագ լեյտենանտ Անահիտ Իսոյանս ուսումնասիրելով թիվ **13913051** կատարողական վարույթի նյութերը

ՊԱՐԶԵՑԻ

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի կողմից **20 օգոստոսի 2025 թ.** տրված թիվ **ԵԴ2/7832/02/25** կատարողական թերթի համաձայն պետք է՝

1.Պատասխանող Կարեն Փիրավադի Մարգարյանից հօգուտ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲ ընկերության բռնագանձել՝ 2.1 17.12.2024թ.-ին կնքված թիվ ՊՄԳ57-047-24/MSG կրեդիտավորման պայմանագրով պարտքը, որը 10.06.2025թ.-ի դրությամբ կազմում 27,129,383.1 ՀՀ դրամ, որից՝ 25,887,774.8 ՀՀ դրամ՝ չմարված հիմնական պարտավորության (վարկի) գումար, 1,238,147.1 ՀՀ դրամ՝ վարկի գումարի նկատմամբ հաշվարկված տոկոսներ, 2,570.4 ՀՀ դրամ՝ Պայմանագրի 4.1 կետի համաձայն վարկի գումարը վճարելու ժամկետները խախտելու համար վճարման ենթակա տույժ (0.13%), 8,920.8 ՀՀ դրամ՝ Պայմանագրի 4.1 կետի համաձայն վարկի գումարը վճարելու ժամկետները խախտելու համար վճարման ենթակա տույժ (0.13%):

2. 17.12.2024թ.-ին կնքված թիվ ՊՄԳ57-047-24/MSG կրեդիտավորման պայմանագրի 1.2- րդ և 4.1-րդ կետերով նախատեսված տոկոսը և տույժերը՝ սկսած 11.06.2025թ.-ից մինչև վարկի և դրա նկատմամբ հաշվարկված /հաշվարկվող/ տոկոսների փաստացի վերադարձման օրը:

3. Հայցվորի կողմից նախապես 352,800 ՀՀ դրամի չափով վճարված արբիտ-ռաժային վճարի գումարը:

4. Ընդհանուր գումարի բռնագանձումն ի թիվս Վարդուհի Գրիգորի Կաֆյանի այլ գույքերի, բռնագանձում տարածել նաև՝ Բանկի և գրավատու-վարկառու Կարեն Մարգարյանի միջև 17.12.2024թ.-ին կնքված թիվ ՊՄԳ57-047-24/MSGRP անշարժ գույքի գրավ (հիփոթեքի) պայմանագրով հօգուտ Բանկի գրավադրված՝ ՀՀ, մարզ Կոտայք, համայնք Աբովյան, Վերին Պտղնի 3-րդ փողոց, 23 բնակելի տուն հասցեում գտնվող անշարժ գույքի վրա»:

Իրականացված կատարողական գործողությունների ընթացքում արգելանք է դրվել գրավի առարկա ՀՀ, մարզ Կոտայք, համայնք Աբովյան, Վերին Պտղնի 3-րդ փողոց, 23 բնակելի տուն անշարժ գույքի վրա, որի շուկայական արժեքը <<Արմէքսպերտիզա>> ՍՊԸ կողմից տրված եզրակացության համաձայն կազմում է 34.740,000 ՀՀ դրամ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 28.1, 43 հոդվածներով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով, 35.1, 35.2, 35.3 եւ 35.4 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

Պարտապան՝ Կարեն Փիրավադի Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող՝ գրավի առարկա, ՀՀ, մարզ Կոտայք, համայնք Աբովյան, Վերին Պտղնի 3-րդ փողոց, 23 բնակելի տուն անշարժ գույքը

հ/հ	լոտի անվանումը նկարագիրը	գնահատման գինը	մեկնարկային գինը	գույքի քանակը
1.	ՀՀ, մարզ Կոտայք, համայնք Աբովյան, Վերին Պտղնի 3-րդ փողոց, 23 բնակելի տուն	**34.740.000** ՀՀ դրամ	**26.055,000** ՀՀ դրամ	1 հատ

ներկայացնել հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ հարկադիր կատարման ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝ www.ajurd.am միջոցով:

Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբ սահմանել՝ **«20» 01. 2025 թվականը:**

Որոշման պատճեն ուղարկել կողմերին:

Հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով՝ որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից՝ երկամսյա ժամկետում կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Հարկադիր կատարող
արդարադատության ավագ լեյտենանտ **Անահիտ Իսոյան**

Ծ Ա Ն Ո Թ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Յուրաքանչյուր լոտի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխատանքային օրվա համապատասխան ժամը: Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ երրորդ աշխատանքային օրը, կայքում զետեղվում է կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լոտի մասին ծանուցումը:

Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքերով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով: Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լոտի գնման գինը սահմանված ժամկետում չվճարվելու կամ առուվաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքերով, ապա լոտի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հարկադիր աճուրդի է ներկայացվում նաև պարտապանին պատկանող՝ օրենքով սահմանված նույն հերթում ներառված այլ գույք, իսկ նույն հերթում ներառված գույքերի անբավարարության դեպքում՝ հաջորդ հերթում ներառված այլ գույք:

«Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Դուք իրավունք ունեք ծանուցումը ստանալու օրվանից երկշաբաթյա ժամկետում Հարկադիր կատարումն ապահովող ծառայության ներկայացնելու գրավոր առաջարկություն՝ լոտի ավելի բարձր մեկնարկային գին սահմանելու վերաբերյալ:

Նույն հոդվածի համաձայն՝ վաճառվող լոտի մեկնարկային գին է սահմանվում առաջարկվող ավելի բարձր գինը, եթե առաջարկություն ներկայացնողն իր առաջարկած գնի երեք տոկոսի չափով վճարում է կատարում Հարկադիր կատարումն ապահովող ծառայության համապատասխան դեպոզիտ հաշվին կամ դրամարկղ: Վճարի կատարման անդորրագիրը ներկայացվում է առաջարկությանը կից:

Եթե սահմանված սահմանված ժամկետում առաջարկություն են ներկայացնում մեկից ավելի անձինք, ապա լոտի մեկնարկային գին է սահմանվում ավելի բարձր գինը, իսկ ավելի ցածր գին առաջարկած անձի (անձանց) կատարած վճարը վերադարձվում է:

Նույն օրենքի 35.4 հոդվածի 4–րդ, 5–րդ և 6-րդ մասերի համաձայն երկրորդ և յուրաքանչյուր հերթական աճուրդից հետո, լոտը չվաճառվելու դեպքում պահանջատերը աճուրդի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունելու այդ աճուրդի մեկնարկային գնով: Պահանջատերը պահանջի դիմաց լոտն իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պահանջը կարող է ներկայացնել ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո երկրորդ աշխատանքային օրվա ավարտը: Գույքը /լոտը/ պահանջատիրոջը հանձնվում է վերջինիս կողմից կատարողական գործողությունների կատարման ծախսերը

վճարելուց հետո, իսկ գույքի /լոտի/ հանձման կապակցությամբ հարկեր վճարելու պարտականություն առաջանալու դեպքում՝ նաև դրա կատարումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելուց հետո: